ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀԿԳՆՄԱԱՊՁԲ-19/28

ք. Երևան «14» 06 2019թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի լիազորությունները կատարող՝ Ս. Մուրադյան, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Հայաստանի Շախմատի Ակադեմիա Հիմնադրամ, ի դեմս տնօրեն՝ Ս. Լպուտյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Պատվիրատուին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Կատարողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Կատարողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Կատարողից պահանջել հատուցելու վնասները, եթե Պատվիրատուն Կատարողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Կատարողը էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Չննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Կատարողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Կատարողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Կատարողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Կատարողը իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Պատվիրատուի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Պատվիրատուն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Պատվիրատուի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Պատվիրատուի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պատվիրատուին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Պատվիրատուին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Պատվիրատուին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Պատվիրատուի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Պատվիրատուի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Կատարողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Պատվիրատուին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Պատվիրատուին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 91481000 (իննսունմեկ միլիոն չորս հարյուր ութսունմեկ հազար) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Կատարողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

3.2 Պատվիրատուն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Կատարողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ:

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կատարողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Կատարողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ

գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1 և N 2 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	Հայաստանի Շախմատի Ակադեմիա Հիմնադրամ
Ք. Երևան, Կառավարական տուն 2	ք. Երևան, Հանրապետության 49/9
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 900011005130	Հ/Հ 1570018417800100
ՀՎՀՀ 02512868	ՀՎՀՀ 02560522
Գլխավոր քարտուղարի լիազորությունները կատարող	Տնօրեն՝
_____ Ս. Մուրադյան	_____ Ս. Լպուտյան
/ստորագրություն/ Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
«14» 06 2019թ. կնքված
ՀՀԿԳՆՄԱՊՁԲ-19/28 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Չափաբաժինները	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ Դասակարգման (CPV)	Ապրանքի							
		Անվանումը, ապրանքային նշանը	Արտադրողը, ծագման երկիրը	Տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	քանակը	միավորի գինը, ՀՀ դրամ	ընդամենը գինը, ՀՀ դրամ	Մատակարարման ժամկետը*
1	22111110-57	Դասագիրք «Շախմատ 4»	Հայաստանի Շախմատի Ակադեմիա Հիմնադրամ, ՀՀ	«Շախմատ»՝ 4-րդ դասարանի դասագիրք, հեղ. Հ.Տ.Թումանյան Բովանդակային չափանիշներ Դասագրքի բովանդակությունը պետք է լինի հիմնավորված և ժամանակակից, ներկայացվի բավարար խորությամբ ու ընդգրկունությամբ, համապատասխանի տվյալ առարկայի չափորոշչային պահանջներին և ծրագրին, սովորողների անհատական և տարիքային զարգացման առանձնահատկություններին: Դասագիրքը պետք է նպաստի գիտելիքների ձեռքբերմանը, հմտությունների զարգացմանը և սովորողների արժեհամակարգի ձևավորմանը: Այն պետք է իր հիմքում ունենա համամարդկային ու ազգային արժեքները զարգացնող ներուժ, չհակասի ՀՀ սահմանադրությանը և օրենքներին: Դասագիրքը պետք է բաղկացած լինի 48 դասերից: Յուրաքանչյուր դաս պետք է կազմված լինի տեսական և գործնական մասերից: Տեսական մասում պետք է տրվի դասի հիմնական նպատակը, իսկգործնական մասում պետք է երկայացվեն կրթական հիմնական խնդիրները: Բովանդակությունը պետք է համապատասխանի առարկայական ծրագրին, ներառի ծրագրով սահմանված գիտելիքների ամբողջությունը: Բովանդակությունը պետք է նպաստի առարկայի չափորոշչով սահմանված կարողությունների, հմտությունների և արժեքային համակարգի ձևավորմանը: Նյութի ծավալը պետք է համապատասխանի ուսպլանով հատկացված ժամաքանակին: Բովանդակության բարդության աստիճանը պետք է համապատասխանի սովորողների տարիքային առանձնահատկություններին, յուրացման հնարավորություններին: Պետք է ապահովվեն միջառարկայական կապերը: Բովանդակությունը պետք է սովորողներին հնարավորություն տա հաղորդակցվելու համամարդկային մշակույթային արժեքներին, ձևավորելու սեփական վերաբերմունք դրանց նկատմամբ: Դասագրքի ձևավորումը պետք է լինի յուրացման համար մատչելի, կիրառման տեսանկյունից հարմար և հաճելի: Այն պետք է նպաստի սովորողների գեղագիտական ճաշակի ձևավորմանը: Պատկերազարդումը պետք է	հատ	37839	1000	37839000	Մինչև ս/թ սեպտեմբերի 3-ը

				ունենա գեղագիտական բարձր որակ և համապատասխանի սովորողների պատրաստվածության աստիճանին, ընկալման հնարավորություններին: Պատկերազարդումը պետք է ներառի ինչպես հայկական, այնպես էլ համաշխարհային շախմատին վերաբերող նյութեր: Պատկերազարդումը պետք է ներառիսովորողի կյանքին ու միջավայրին վերաբերող նյութեր: Տեխնիկական չափանիշները Չափսը 60x841/8 Տեքստի թուղթը օֆսեթ Ծավալը 12,5 տպ. մամուլ Էջերի քանակը 100					
2	22111110-25	«Շախմատ 2» վարժություն ների տետր	Հայաստանի Շախմատի Ակադեմիա Հիմնադրամ, ՀՀ	«Շախմատ 2» վարժությունների տետր՝ 2-րդ դասարան, հեղ. Հ.Տ.Թումանյան Բովանդակային չափանիշներ Վարժությունների տետրի բովանդակությունը պետք է լինի հիմնավորված և ժամանակակից, ներկայացվի բավարար խորությամբ ու ընդգրկունությամբ, համապատասխանի տվյալ առարկայի չափորոշչային պահանջներին և ծրագրին, սովորողների անհատական և տարիքային առանձնահատկություններին: Վարժությունների տետրը պետք է նպաստի շախմատային գիտելիքների ամրապնդմանը, հմտությունների զարգացմանը և սովորողների արժեհամակարգի ձևավորմանը: Վարժությունների տետրը պետք է նախատեսված լինի գործնական աշխատանքների միջոցով անցած նյութի յուրացման և ամրապնդման համար: Պետք է բաղկացած լինի 54 առանձին դասերից և 2 թեմատիկ գրավոր աշխատանքներից: Բովանդակությունը պետք է համապատասխանի առարկայական ծրագրին, ներառի ծրագրով սահմանված գիտելիքների ամբողջությունը: Բովանդակությունը պետք է նպաստի առարկայի չափորոշչով սահմանված կարողությունների, հմտությունների և արժեքային համակարգի ձևավորմանը: Նյութի ծավալը պետք է համապատասխանի ուսպլանով հատկացված ժամաքանակին: Բովանդակության բարդության աստիճանը պետք է համապատասխանի սովորողների տարիքային առանձնահատկություններին, յուրացման հնարավորություններին: Վարժությունների տետրի ձևավորումը պետք է լինի յուրացման համար մատչելի, կիրառման տեսանկյունից հարմար և հաճելի: Այն պետք է նպաստի սովորողների գեղագիտական ճաշակի ձևավորմանը: Պատկերազարդումը պետք է ունենա գեղագիտական բարձր որակ և համապատասխանի սովորողների պատրաստվածության աստիճանին, ընկալման հնարավորություններին: Պատկերազարդումը պետք է ներառի ինչպես հայկական, այնպես էլ համաշխարհային շախմատին վերաբերող նյութեր: Պատկերազարդումը պետք է ներառիսովորողի կյանքին ու միջավայրին վերաբերող նյութեր: Տեխնիկական չափանիշները Չափսը 60x84 1/8 Ծավալը 10 տպ. մամուլ Էջերի քանակը 80	հատ	38209	400	15283600	Մինչև ս/թ սեպտեմբերի 3-ը

3	22111110-34	«Շախմատ 3» վարժություն ների տետր	Հայաստանի Շախմատի Ակադեմիա Հիմնադրամ, ՀՀ	«Շախմատ 3» վարժությունների տետր՝ 3-րդ դասարան, հեղ. Հ.Տ.Թումանյան Բովանդակային չափանիշներ Վարժություններիտետրի բովանդակությունը պետք է լինի հիմնավորված և ժամանակակից, ներկայացվի բավարար խորությամբ ու ընդգրկունությամբ, համապատասխանի տվյալ առարկայի չափորոշչային պահանջներին և ծրագրին, սովորողների անհատական և տարիքային առանձնահատկություններին: Վարժությունների տետրը պետք է նպաստի շախմատային գիտելիքների ամրապնդմանը, հմտությունների զարգացմանը և սովորողների արժեհամակարգի ձևավորմանը: Վարժությունների տետրը պետք է նախատեսված լինի գործնական աշխատանքների միջոցով անցած նյութի յուրացման և ամրապնդման համար: Պետք է բաղկացած լինի 48 առանձին դասերից և 2 թեմատիկ գրավոր աշխատանքներից: Բովանդակությունը պետք է համապատասխանի առարկայական ծրագրին, ներառի ծրագրով սահմանված գիտելիքների ամբողջությունը: Բովանդակությունը պետք է նպաստի առարկայի չափորոշչով սահմանված կարողությունների, հմտությունների և արժեքային համակարգի ձևավորմանը:Նյութի ծավալը պետք է համապատասխանի ուսպլանով հատկացված ժամաքանակին: Բովանդակության բարդության աստիճանը պետք է համապատասխանի սովորողների տարիքային առանձնահատկություններին, յուրացման հնարավորություններին: Վարժությունների տետրի ձևավորումը պետք է լինի յուրացման համար մատչելի, կիրառման տեսանկյունից հարմար և հաճելի: Այն պետք է նպաստի սովորողների գեղագիտական ճաշակի ձևավորմանը: Պատկերազարդումը պետք է ունենա գեղագիտական բարձր որակ և համապատասխանի սովորողների պատրաստվածության աստիճանին, ընկալման հնարավորություններին:Պատկերազարդումը պետք է ներառի ինչպես հայկական, այնպես էլ համաշխարհային շախմատին վերաբերող նյութեր:Պատկերազարդումը պետք է ներառի սովորողի կյանքին ու միջավայրին վերաբերող նյութեր: Տեխնիկական չափանիշները Չափսը 60x84 1/8 Ծավալը 9,5 տպ. մամուլ Էջերի քանակը 76	հատ	37987	400	15194800	Մինչև ս/թ սեպտեմբերի 3-ը
4	22111110-58	«Շախմատ 4» վարժություն ների տետր	Հայաստանի Շախմատի Ակադեմիա Հիմնադրամ, ՀՀ	«Շախմատ 4» վարժությունների տետր՝ 4-րդ դասարան, հեղ. Հ.Տ.Թումանյան Բովանդակային չափանիշներ Վարժությունների տետրի բովանդակությունը պետք է լինի հիմնավորված և ժամանակակից, ներկայացվի բավարար խորությամբ ու ընդգրկունությամբ, համապատասխանի տվյալ առարկայի չափորոշչային պահանջներին և ծրագրին, սովորողների անհատական և տարիքային առանձնահատկություններին: Վարժությունների տետրը պետք է նպաստի շախմատային գիտելիքների ամրապնդմանը, հմտությունների զարգացմանը և սովորողների արժեհամակարգի ձևավորմանը: Վարժությունների տետրը պետք է նախատեսված լինի գործնական	հատ	38606	600	23163600	Մինչև ս/թ սեպտեմբերի 3-ը

				աշխատանքների միջոցով անցած նյութի յուրացման և ամրապնդման համար: Պետք է բաղկացած լինի 48 առանձին դասերից, լրացուցիչ վարժություններից և 2 թեմատիկ գրավոր աշխատանքներից: Բովանդակությունը պետք է համապատասխանի առարկայական ծրագրին, ներառի ծրագրով սահմանված գիտելիքների ամբողջությունը: Բովանդակությունը պետք է նպաստի առարկայի չափորոշչով սահմանված կարողությունների, հմտությունների և արժեքային համակարգի ձևավորմանը: Նյութի ծավալը պետք է համապատասխանի ուսպլանով հատկացված ժամաքանակին: Բովանդակության բարդության աստիճանը պետք է համապատասխանի սովորողների տարիքային առանձնահատկություններին, յուրացման հնարավորություններին: Վարժությունների տետրի ձևավորումը պետք է լինի յուրացման համար մատչելի, կիրառման տեսանկյունից հարմար և հաճելի: Այն պետք է նպաստի սովորողների գեղագիտական ճաշակի ձևավորմանը: Պատկերազարդումը պետք է ունենա գեղագիտական բարձր որակ և համապատասխանի սովորողների պատրաստվածության աստիճանին, ընկալման հնարավորություններին: Պատկերազարդումը պետք է ներառի ինչպես հայկական, այնպես էլ համաշխարհային շախմատին վերաբերող նյութեր: Պատկերազարդումը պետք է ներառիսովորողի կյանքին ու միջավայրին վերաբերող նյութեր: Տեխնիկական չափանիշները Չափսը 60x84 1/8 Ծավալը 8 տպ. մամուլ Էջերի քանակը 64					

1-4- րդ չափաբաժինների համար

Ելքային տեղեկություններ՝ Հայպետստանդարտի կոլեգիայի 1996թ. հոկտեմբերի 25-ի թիվ 8 որոշմամբ հաստատված «Հրատարակություն, ելքային տեղեկություններ» ԳՈՍՏ 7.4-95 միջպետական ստանդարտին համապատասխան:

Հատուկ նշագրում՝ դասագրքերի տեսանելի մասում, առանձին գունաբաժանմամբ՝ <<Վաճառքի ենթակա չէ>> բառերը,

Դասագրքերի մատակարարումն իրականացվում է Կատարողի կողմից՝ համաձայն կից **բաշխման ցուցակի**:

Դասագրքերը պետք է լինեն նոր՝ չօգտագործված:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

---------- Ս. Մուրադյան

ԿԱՏԱՐՈՂ

---------- Ս. Լպուտյան

ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ

Հաշիվարժին	Անվանումը	Երևանի քաղաքապետարանի հանարկարթության վարչություն	Տավուշի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Լոռու մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Արագածոտնի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Կոտայքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Արարատի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Վայոց_Ձորի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	ԿԳՆ ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատություններ*	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	Դասագիրք «Շախմատ 4»	11647	1650	3212	3220	1726	3622	2920	3543	3682	630	1440	547	37839
2	«Շախմատ 2» վարժությունների տետր	12041	1628	3022	3120	1700	3679	2782	3577	3675	600	1577	808	37987
3	«Շախմատ 3» վարժությունների տետր	12145	1544	3125	3000	1716	3593	2915	3541	3604	630	1463	711	37987
4	«Շախմատ 4» վարժությունների տետր	12278	1650	3084	3200	1770	3913	2920	3534	3682	630	1408	537	38606
ԸՆԴԱՄԵՆԸ		48111	6472	12443	12540	6912	14807	11537	14195	14643	2490	5888	2603	152641

*** ՀՀ ԿԳՆ ենթակա ուսումնական հաստատությունների «Շախմատ» առարկայի դասագրքերի և վարժությունների տետրերի հասանելիք քանակը մնում է ի պահ «Հայաստանի շախմատի ակադեմիա» հիմնադրամում, որտեղից էլ կատարվելու է վերոհիշյալ դասագրքերի և տետրերի բաշխումը՝ համաձայն կից ներկայացված ցուցակի:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

_____ Ս. Մուրադյան

ԿԱՏԱՐՈՂ

_____ Ս. Լպուտյան

ՑՈՒՑԱԿ

/ԿԳՆ ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատություններ/

Հաստիքային	Անվանումը	1 «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր՝ արհեստագործական ավագ դպրոց	2 Երևանի «Օլիմպոս» կրթահամալիր-ավագ դպրոց	3 Երևանի Վ. Թեքեյանի անվ. թիվ 92 հիմնական դպրոց	4 Խ. Աբովյանի անվան «ՊՄՀ» թիվ 57 հիմնական դպրոց	5 Աբովյանի կրթահամալիր	6 Վարդենիսի կրթահամալիր	7 Գորիսի Բակունցի անվ. թիվ 1 ավագ դպրոց	8 Գյումրու թիվ 45 միջնակարգ դպրոց	9 Երևանի Նիկողայոս Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոց	10 Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր	11 Երևանի թիվ 16 հատուկ դպրոց	12 «Ծաղկունք Բաց դպրոց» միմնադրամ	13 ՄԱՅՐ ԱՔՍՈՎ ՍՈՒՆԸ ԷՋՄԻԱԾՆԻ «ՀՈՂԵՎԱՆ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑ»	14 Ջերմուկի կրթահամալիր	15 Կապանի թիվ 3 հատուկ վերակաց կրթահամալիր	16 Ճամբարակի վարժարան	Ընդամենը
1	Դասագիրք «Շախմատ 4»		30	65	70	56	30	95	35	5		25	11	50	45	5	25	547
2	«Շախմատ 2» վարժություններ ի տետր	320	25	60	75	80	30	70	40	6	15	20	12	50		5		808
3	«Շախմատ 3» վարժություններ ի տետր	210	25	65	100	84	18	85	35			25	9	50		5		711
4	«Շախմատ 4» վարժություններ ի տետր		30	65	100	85	16	95	35	5		35	11	50		10		537
	ԸՆԴԱՄԵՆԸ	530	110	255	345	305	94	345	145	16	15	105	43	200	45	25	25	2603

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ս. Մուրադյան

ԿԱՏԱՐՈՂ

Ս. Լպուտյան

«14» 06 **Հավելված N 2**
2019թ. կնքված
ՀՀԿԳՆՄԱՊՁԲ-19/28 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
Չափաբաժնի համարը	**Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)**	**Անվանումը**	**Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ.-ին, ըստ ամիսների, այդ թվում.**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր /մինչև 20-ը/	**Ընդամենը**
1	22111110-57	Դասագիրք «Շախմատ 4»	-	-	-	-	-		37839000	37839000	37839000	37839000	37839000	37839000	37839000
2	22111110-25	«Շախմատ 2» վարժությունների տետր	-	-	-	-	-		15283600	15283600	15283600	15283600	15283600	15283600	15283600
3	22111110-34	«Շախմատ 3» վարժությունների տետր	-	-	-	-	-		15194800	15194800	15194800	15194800	15194800	15194800	15194800
4	22111110-58	«Շախմատ 4» վարժությունների տետր	-	-	-	-	-		23163600	23163600	23163600	23163600	23163600	23163600	23163600
ԸՆԴԱՄԵՆԸ									**91481000**	**9148 000**	**91481000**	**91481000**	**91481000**	**91481000**	**91481000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ս. Մուրադյան

ԿԱՏԱՐՈՂ

Ս. Լպուտյան